

Армянский Колледж

Учитесь АРМЯНСКОМ ГОВОРИТЬ НА ЯЗЫКЕ

+7 904 506 91 28

Անկախության օրը

22 տարի առաջ տեղի ունեցավ անկախության հանրաքվեն: Մի սպիտակ թերթիկ վրան հաստ «Այո» և ջնջված «Ոչ», մինչ այդ բաժանվում էր որպես թռուցիկ, որպես օրինակ, թե ինչպես պետք է ջնջել Անկախության հանրաքվեի թերթիկը: Իսկ արդեն Հայաստանի քաղաքացու նշան արած թերթիկն այդ օրը պետք է վճռորոշ գործիք դառնար Խորհրդային Միությանից դե ֆակտո պոկված իրավաբանորեն անկախությունը չձևակերպած, Արցախի ազատագրման համար կոչվածները մասամբ հետևում թողած Հայաստանի նոր քաղաքացին: Անկախ նաև Լույսը և համոզված եմ, որ երկրով մտահոգ ու գրագետ մարդիկ, մտավորականության զգալի շերտը և Արցախի ազատագրման ջատագով շատ մեծ թվով մարդիկ «Այո» անել էին հանրաքվեի տուփի մոտ գնալով, 99 տոկոս չգիտեմ, բայց որ կեսից զգալի ավելին անկախության օգտին էին քվեարկել: դա հաստատ: Այսինքն՝ անկախ պետություն ունենալու և հզոր կայսրության մեջ անվտանգության նկատառումներով ապրելու ձգտումն այդ պահին հակամարտում էին մեր ժողովրդի մեջ և լավ է, որ առաջինն էր ուժեղ, և ունեցանք անկախ Հայաստան:


Բոլոր դեպքերում, մենք՝ հայերս, սիրում ենք այդ օրը՝ անկախ ամեն տեսակ ապակողմնորոշչից, անկախ մեր ոխերիմ բարեկամների և բարեկամ հակառակորդների նավից: Երկիր ենք, անկախ ենք, ու Մաքսային միություն, թե ե՛ս, ԱՄՆ թե Ռուսաստան, թող չհրազեն, որ կա համանախակ են մեր անկախությունը, դա մենք թույլ չենք տալու:

Մարիտա Խաչատրյան

АРМЯНСКИЙ ЯЗЫК ДЛЯ САМЫХ МАЛЕНЬКИХ



ԵՎ Լ
ԵՎ-ը սասց.
- Որովհետև
Հանգիստ չունենք մենք մի թեթև,
Ու-ն էլ թող գա ու մեզ նման
Բառ շողկապի այսուհետև:



Օ օ
ՕՐԱՅՈՒՅՑԻ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ
Օրացույցի թերթիկները
Պակասում են օրեցօր:
Պոկվում մեկ-մեկ
Ու քվում են
Օրերի հետ հեռացող:
-Ես մեծանում,
Իսկ դու, պապիկ,
Ծերանում ես օր-օրի...
-Օրերը չեն կարող, գառ ջան,
Սիրաշահել բոլորին:




Ֆ ֆ
ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏ
Մի Ֆանտաստիկ ֆուտբոլային
Կյանք չունենք ֆուտբոլից բացի:
Ինչ հարցնե՛ր՝ ճշգրիտ կասեր
Ֆուտբոլի աշխարհի մասին:




Рубрику ведет преподаватель армянского языка Арmine Варданян

Երկրի վերջածո է Յուրի Սահակյանի «Այբբենարանի ուղեկից» գրքից
Տպագրության պատրաստեց Արմինե Վարդանյանը


КРОССВОРДЫ ОТ ШОГИК СИМВОНЯН



Кроссворд № 34
По вертикали:
1. Европа. 2. Лист
По горизонтали:
1. Солнышко



Кроссворд № 38
По направлениям:
1. Аэропорт



Кроссворд № 39
По вертикали: 1. Француз.
По направлениям стрелок:
1. Ферма. 2. Голубь.
3. Конечно, разумеется.



Рубрику ведет преподаватель армянского языка Шогик Симвонян

Մշակույթ

Եվրոպայում Կոմիտաս տարածող վարպետաց քառյակը



Չախից Զա՛ր Բորս Բատալովիչ, Արտյոմ Պետրովիչ, Նիկոլա Սեգատտա, Հրաչյա Գալստյան

Հայ, սերբ, ռուս և իտալացի ջութակահարների համերգներին հնչում են բացառապես հայ հանձարի ստեղծագործությունները:
Մշակարհի մշակութային կարևորագույն օջախներից մեկում՝ Իտալիայի հյուսիսում, ստեղծվել ու իր մի քանի կարևոր յուրօրինակություններով ապրում է ջութակի վարպետների քառյակը՝ որի նմանը աշխարհի մեկ այլ վայրում ուղղակի գոյություն չունի:

Առաջին յուրօրինակությունն այն է, որ քառյակն ինտենցիոնալ է: Առաջին ջութակ հայ Հրաչյա Գալստյան (Հայաստան, ապրում է իտալական Կրեմոնա քաղաքում), երկրորդ ջութակ՝ սերբ Բորիս Բատալովիչ (Սերբիա, ապրում է սերբական Նովի Սադ քաղաքում), այս՝ Արտյոմ Պետրովիչ (Ռուսաստան, ապրում է իտալական Կրեմոնա քաղաքում) և թավջութակ՝ իտալացի Նիկոլա Սեգատտա (Իտալիա, ապրում է իտալական Տրեստո քաղաքում): Երկրորդ յուրօրինակությունը, որ քառյակը կազմված է իտալական ջութակագործների բարձրագույն դպրոցում ուսանած ջութակի վարպետներից, որոնք նվագում են իրենց պատրաստած գործիքներով: Եվ երրորդը՝ քառյակի համերգացանկը բաղկացած է բացարձակապես մեկ անձի ստեղծագործություններից և դա հայ հանձար Կոմիտասն է:
Խմբի ստեղծման գաղափարը Երևանի կոնսերվատորիայի և ապա իտալական ջութակագործների վարպետաց բարձրագույն դպրոցի շրջանավարտ Հրաչյա Գալստյանինն է, որն այսօր իր ընտանիքով ապրում և ստեղծագործում է Իտալիայի հյուսիսում գտնվող գոլտրիկ Կրեմոնա քաղաքում: Գաղափարի շուրջը հավաքվածները չունեն հովանավոր, պրոդյուսեր, ֆինանսական լրացուցիչ միջոցներ, նրանք ընդամենը ունեն Կոմիտասը եվրոպային և նաև աշխարհին ներկայացնելու ազնիվ նպատակ:
Սա ուղղակի հոգով մշակույթին նվիրված անձանց անմեկնելի և անբացատրելի երևույթ է, երբ հավաքվել են չորս անհատականություն, չորս աշխարհաիայացի ու մշակույթի ներկայացուցիչ, գտել ընդհանուր լեզու և այդ

«լեզվի» կրող Կոմիտասն է: Նրանք հստակ գիտեն իրենց առաքելությունը, այն է նվագել և ներկայացնել Կոմիտասյան ելևէջներն ու թրթիռը եվրոպացի ունկնդրին: Նրանց յուրօրինակ համերգների աշխարհագրությունն արդեն դուրս է եկել Իտալիայի սահմաններից, հասել Շվեյցարիա և Ավստրիա: Հայաստանից հեռու նրանք նվագում և ապրեցնում են հայ հոգու ձայնը, մեր մշակի ու գինվորի պրկված նյարդերի ու մկանների թրթիռը, որն իր նրբագույն թելիկներով հավաքել ու հելուկագործել է մեծն Վարպետ Կոմիտասը:
Վեհի և գեղեցիկի ասպետների այս քառյակի մասին տեղեկանում են միայն նրանք, ովքեր նրանց համերգների ունկնդիրն են: Վարպետաց քառյակի մասին տեղեկացողները, նրանց կատարումներով և Կոմիտասի յուրօրինակ մեկնաբանությունով հիացողների գնալով սովորացող բանակում հիմնականում օտարազգիներն են և մեր հայրենակիցներին մատների վրա կարելի է հաշվել:
Այսօր, երբ մեր մշակութային ցանկացած ներկայացում կարող է դառնալ որոշիչ գրավակն ու բաղադրիչ հայկական մշակութային այցեքարտի, մենք մի տեսակ աններելի անմասնակից ենք մեր հանձարը ներկայացնող այսպիսի յուրօրինակ նախաձեռնություններին: Միգուցե համեստությունը սազական է իրենց առաքելությունը գիտակցող ի ծնե մտավորական մարդկանց, բայց մեր կողմից մեծ շնայություն է այս իրողությունը չօգտագործելն ու անտեսելը: Այսպիսի ազնիվ գաղափարները շատ դժվար են ծնվում և շատ դժվար էլ ապրում են, սակայն Հրաչյա Գալստյանի ազգանվեր նպատակի իրականացումը անցել է կայացման դժվար սահմանը և հիմա ուղղակի պետք

է գոնե սկզբում բարոյապես օժանդակել ու աջակցել վարպետաց քառյակին և իր գաղափարակրին, որ նրա նախաձեռնությունը դառնա ուշադրության ու զնահատման արժանի նաև մայր հայրենիքում, որը կարող է ոգևորիչ օրինակ հանդիսանալ մնացյալի համար: Անհրաժեշտ է ստեղծել հնարավորություն, որ տարբեր մշակույթների կրող այս քառյակի մեկնությամբ Կոմիտաս հանձարի լարային թրթիռը հասնի աշխարհի տարբեր անկյուններ, որ նրանց մշակութային առաքելությունը ծառայի իր գերագույն և հիմնական նպատակին:
Հրաչյա Գալստյանը վարվել է իր հոգու թելադրանքով, նա ջութակագործ է և ջութակ նվագելն ու համերգ տալն, այն էլ սակավաթիվ ունկնդրի մոտ ըստ էության չի կարող նյութական որևէ լուրջ շարժառիթ ունենալ: Նրա նպատակի ու գաղափարի, իսկ ապա նաև դրա կենսագործման հիմնական շարժիչ ուժը Կոմիտասն է ու նրա գոհարների լարային մեկնաբանումը հայրենի եզերքից անդին: Սա բացառապես հոգու ձայնանք է և հայ մտավորականին վայել գործունեություն:
Հրաչյա Գալստյան հայը ստեղծել է իր վարպետաց քառյակը, ու նվագում են նրանք ականջալուր լինելով միայն այն հիացմունքին ու ծափերին, որոնք որպես ամենամեծ վարձատրություն իրենց է տալիս ունկնդիրը: Այս յուրօրինակ նախաձեռնության մասին անհրաժեշտ է, որ տեղեկանան ոչ միայն մշակութային ինտելեկտուալի համար պատասխանատու մարմինները, այլև նրանք, ովքեր արժևորում են հոգևորը, ովքեր հակված են իրական մեկնաստության ու բարեգործության:
Համբարձում Գրիգորյան